

ներկայութիւնը ու անոնց հաւակիթները: Laboratoire-ը, ինչպէս կը սպասէի, ժիտական պատասխան տուաւ: Տղան չունէր ոչ ճճի և ոչ ալ ճճի հաւակիթ: Կը կարծէի թէ այս գրական ու վերջնական զննութենէն յետոյ, հայրը պիտի համոզուէր: Ոչ. ան չհաւատաց ու չուղեց հասկնալ թէ դժբախտաբար իր տղան ունէր սօղութանքն շատ աւելի ծանր հիւանդութիւն մը, որովհետեւ եթէ կրնանք մէկ իսկ մէկ քանի տարրուան մէջ, աղէկցնել լուսնոտառութիւնը, եթէ չզիտնանք անոր էական ու նախնական պատճառները: Հայրը մեկնեցաւ տղուն ձեռքէն բռնած ու կրկնելով թէ իր տղան աղէկցնելու համար սօղութանի դեղ կը փնտոէ: Մեկնեցաւ ան՝ տխուր ու վհատած: Ահաւասիկ օրինակ մը թէ որդ չունեցող տղու մը ծնողացը վրայ սօղութանը որքան կ'ազդէ:

Երկրորդ պարագան տարրեր էր: Պատիկ տղան, եօթը տարեկան, չորս տարեկան հասակին օր մը սովորական որդ մը ձգած էր իր կղկղանքներուն հետ: Անկից ի վեր տասն անգամ հայրը իրեն դեղ տուած էր, միւն սօղութաններն ալ դուրս հանելու համար: Երկրէ երկիր կը պատցնէր այդ խեղմ մարդը իր տղան ու իր դժբախտ ու տխուր հոգին:

Կ'երթար մէկ բժիշկէն միւսը: Ոչ ոք կրնար աղէկցնել իր տղան: Պարզ քննութեամբ մը տեսայ թէ պարզապէս կոկորդի մսաբոյս ունէր ու այդ էր պատճառը որ գիշերը տղան կը խոկար ու բերանը բաց կը քնանար և շարունակ հարրուխ կ'ըլլար: Վիրաբոյժին զրկել ուղեցի: Ոչ. «Տղաս սօղութան ունի, Տօքթէօր, դուն անոր եղ տուր» կ'ըսէր հայրը շուարած: Ան ալ գնաց նոր բժիշկ մը փնտռելու:

Արևելքի մէջ ի՞նչպէս այս սոսկալի անունը հանած են որդերը: Արդարացի՞ է այս սարսափը:

Կ'ուզեմ ուրեմն օգտուիլ այս օրինակներէն ու բացատրել՝ յաջորդ յօդուածով մը թէ ինչ են ճճիները, որո՞նք են իրենց ըրած աւերումները, ի՞նչ են անոնց դարմանները ու վերջացնել ըսելով թէ ինչո՞ւ համար այս անշուկ ու անձայն որդերը ջիղերուն վրայ կ'աղդեն:

ԲԺ. Պ. ՔՕԼՈԼԵԱՆ

Մի հաւատաք աւանդութիւններուն, ըսելով քէ բազմաքիւ սերութիւններու կողմէ փոխանցուած են: Մի հաւատաք քանի մը ըսելով քէ շատերու կողմէ կրկնուած է: Սակայն երբ սկզբումք մը համաձայն է բանականութեան և օգուս կը բերէ ամենուն, ընդունեցէք զայն և պիմոդ փարեցէք անոր: